11 DEC 20

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1931 – փետրուար – թիւ 2

էջ

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

ՓԷՇԻԿԵԱՆ Հ. Ե. — *Վարդանանց յիշատակին* . . . . . . . 49

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

ԱՒԳԵՐ ԱԲԲԱՅ Հ. ՅՈՎՀԱՆ. — *Առաքելական քարոզութիւնը Հայոց մէջ. Ոսկեանց-Սուքիասանց նահատակութիւնն և Եւստաթէոսեան եղջերուաքաղը.* . . . 52

ՀԱՑՈՒՆԻ. Հ. Վ. — *Առ Վրթանէս թղթին հեղինակը Մակար Ա. է և ոչ Բ.* . . . 61

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ. — *Սրբագրութիւններ Եղիշէի Վարդանայ և Հայոց պատերազմին* 73

ԹՈՐԳՈՄԵԱՆ ՏՈՔԹ. Վ. — *Հայ բժշկական արձանագրաբանութիւն* . . . . 75

**ԳՐԱԿԱՆ**

ՓԷՇԻԿԵԱՆ Հ. Ե. — *Եղիշէին (քերթուած)* 79

ԵՐԵՄԵԱՆ Հ. Ս. — *Քնարական Թէրզեանը* 80

**ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ**

ԱԼԻՇԱՆ Հ. Ղ. – *Եղեւինին տակ. (թրգմ.* Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ) . . . . 85

*Կանտի* . . . . . . . 87

**ԱՄՍՕՐԵԱՅ ՊԱՏՄՈՒԱԾՔ**

ԿՐԱՑԻԱ ՏԵԼԵՏՏԱ. — *Շունը* . . . 89

**ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ**

ՀԱՅԿ ԱՃԷՄԵԱՆ. — *Հայր Ռիկտէր* . 91

ԽՄԲ. — *Հայ եկեղեցական երաժշտութիւն (բանախօսութիւն)* . . . . 93

ՏՈՊԱՃԵԱՆ Յ. — *Վարդանանց պատերազմին պատմական նշանակութիւնը* . . 94

ԽՄԲ. — *Ի պատիւ* փրոֆ. *Պարտիզեանի – Ս. Վարդանանց յիշատակն և թատերական հանդէս (Մուրատ–Ռափայէլեան վարժարանին մէջ)* . . . . . 95

ՔԷՕՐՕՂԼԵԱՆ Ս. — *Թատերական ներկայացում ի Միլան* . . . . . 96

ԽՄԲ. — *Հայ լեզուի բեմ ի Պրիւքսէլ – Ե. Շահին անդամ Ֆրանս. գեղարուեստի քննիչ յանձնաժողովին* . . . . 96

## SOMMAIRE

1931 – Février – numéro 2

p.

*Paitchikian P. Elie* — A la mémoire des S.ts Vartanank. . . . . . 49

**PHILOLOGIE**

*Aucher P. Abbé Jean.* — La prédication apostolique près les Arméniens: Martyre des S.ts Osghiank-Soukiassank et le cerf d'Eustace . . . . 52

*Hatzouni P. V.* — L'auteur de la lettre à Vertanès c'est Macarius I et non II. 61

*Nahabédian P. G.* — Des Corrections dans le texte d'Elisée . . . . 73

*Torkomian Doct. V.* — Epigraphie médicale arménienne . . . . 75

**LITTÉRATURE**

*Paitchikian P. Elie.* — A Elisée . 79

*Erémian P. S.* — Terzian lyrique . 80

**PHILOSOPHIE**

*Alichan P. L.* — Sous le Cèdre (trad. P. V. H.) . . . . . . . 85

Gandhi. . . . . . . . 87

**NOUVELLE MENSUELLE**

*Grazia Deledda.* — Le chien . . 89

**ECHOS d'ARMÉNIE**

*Adjémian Haïg.* — P. Rigter . . 91

*Réd.* — La Musique sacrée de l'Eglise Arménienne (Conférence) . . . 93

*Dobadjian H.* — La signification historique de la guerre des S.ts Vartanank 94

*Réd.* - L'hommage de la Colonie arménien.de Venise au Prof. H. Bardisian – A la mémoire des S.ts Vartanank et représentation théatrale . . . 95

*Kioroglian S.* — Représentation théatrale à Milan . . . . . 96

*Réd.* — Une chaire pour la langue arménienne (à l'Université de Bruxelles). E. Chahine membre de la Commission de la «Société nationale des Beaux-Arts». 96



1843-1931 ՓԵՏՐՈՒԱՐ Թիւ 2

# ԲԱԶՄԱՎԷՊ

## ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԳԻՏԱԿԱՆ – ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀԱՏՈՐ ՁԹ ՌՑՁ-ՌՑՁԱ ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

## ՎԱՐԴԱՆԱՆՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գ ԻՏԵ՞Ս, Հայկակ, թէ ո՛րքան սարսափելի է մեր Հայրենիքի ձմեռը. մեր լեռներու մահասարսուռ բուքն ու բորանը շատ ու շատ կեանքեր է խեղդած։

Եղկելի՜ ուղեւորներ Հայոց աշխարհին, որոնց չարաբաստիկ ժամուն չէ հասած իրենց ականջին ու սրտին՝ հնչիւնը փրկական մեր տաճարներու սրբազան զանգերէն արձակուած։

Առաքինիներո՛ւ շառաւիղ, ահա ազգային մեծ ու աշխարհալուր կոչը կը հրաւիրէ մեզ. «Հայրենեաց է տօն, Հայրենեաց համբաւ». փութանք հայրենի կրակարանին մօտիկ, ու հոն ջերմացընենք մեր ձիւնահար սիրտը, սրտաբեկ հոգին, այս աhեղ սառնամանիքին, այս տառապագին ճանապարհին մէջ։

Վա՜ռ է հայրենի կրակարանը. բոցեր կը ցայտեն կարմիր ու ծիրանի։ Ահա Մասիսի կատարներն հրդեհուած. Տղմուտն արիւն ու կրակ է դարձեր. ծիրանի ալիքներու ծոցէն պատանիներ կը վազեն, հուր մազերով, արեւ աչքով. կը վազեն, կը թռչին սաւառնաթեւ դէպ ի երկինք։ Աւարայրի Պլպուլը Գողթնի քնարներու շունչով վահագնեան տաղեր կը յօրինէ բոցաշունչ սիրովն օծած արիւնաներկ զոհերուն որ աստուածացած են արդէն։

Մեր տաճարներն այսօր համակ լոյս, համակ խունկ, համակ սէր են դարձած։ Վկաներու արիւնն է որ դեռ կը մխայ ու մեզ կ'արբեցընէ իր անմահունակ բոյրով։ Ուխտի՜ տօն, արեա՜ն տօն, Նուիրական կտակ՝ մեր դիւցազն ու սուրբ Ցեղին անմահ զաւակներուն։

* * *

Անմահներու յիշատակին ի՞նչ աւելի սրբանուէր քան զոհը Անմահին մեր սուրբ սեղաններուն վրայ՝ ոգեպարար ու կենսալից, ինչպէս էր մեր հայրերուն, մեր սիրուն նահատակներուն՝ հսկումի գիշերուան մէջ, ահեղ մարտի նախօրեակին։ Եւ ահա մեղմադժիկ ձայն մը որ սիրային ու յաղթական շեշտ մ'ունի, որ կ'արձագանգէ այս



Гос. Публичная Б-ка СССР Спец. Отдел

Гос. Пуб. Библиотека СССР.

digitised by A.R.A.R.@